

Ն. Ս. Օծութիւնը ճամբառ յոգնութեանէն չկրցաւ քարտզ խօսիլ, այլ միայն «Պահպանիչ»ով մը ցրուեց ժողովուրդը, որմէ յետոյ երգերով առաջնորդուեցաւ Ազգ. Առաջնորդարանը, ուր բնդունեց բարի գալուստի աջնամբոյներն ու մազթանքները :

ՄԿՐՏԻՒ ՔՀՅ. ՄՈՒՐԱՏԵԱՆ

18 Մեկու. 1913, Հալէպ

### Յաջորդ Թիւով

### ԽԹԱՆԻ ԴԷՄ ԱՔԱՑՈՂՆԵՐՈՒՆ

Տ. ԴԻՌՆԻՍ ՔՀ. ՏՐԵՋԵԱՆ

Համոզիչ պատասխան մը՝ Երկրուելի մէջ Մ. Մանկասարեանն արտապուած յօդուածին :

### ԽՈՐԵՆԱՑԻՆ ԵՒ ՄԵԾԱՑՈՒՍՑԵՆԵՐԸ

Եկեղ. Քնարեզուրիւնը և. դարուն  
Տ. ՄԵՐԱԾ ՔՀ. ԽԱԶՈՅԵԱՆ

### ՀԱՅՈՒՆ ԵՐԱԺԵՏՈՒԹԻՒՆԸ ԶՈՒՏ ԶԷ ԱՅԼ ԽԱՌՆԱԿ

Տ. ՄԵՐՈՎԼԲ ՔՀ. ՊՈՒՐՄԱՑԵԱՆ

**ՀԱՄԲ.ԶԳ-ԱՅԻՆ ՄԵԾ ՅՈՒԵԼԵԱՆԻՆ առթիւ բացուած նուիրահաւաքութեան մէջ «Տաճար» փափաքելով ունենալ իր համեստ բաժնինը, այսօրուընէ (13 Հոկտ.) մինչեւ նոյ. 13 բաժնեգիներէ իր գանձած զամարներուն 5 օր կը արամազրէ սոյն նպատակին :**

Իր հրաւիրենք առակաւին հաշիւ ունեցող մեր Բաժմանորդները և Գործակալները, այս ամսուան մէջ մաքրել իրենց հաշիւը, գմէն անուղղակի կերպով մասնակցած ըլլալու համար այս նուիրահաւաքութեան, և Խմբագրութիւնս ալ ի վիճակի դնելու համար լայն չափով մը մասնակցելու ասոր :

**ՏԱ.ՃԱ.Բ ՄԱՆԿԱՆՅԻ 10րդ թիւը (Հոկտ.)**  
որ բացառիկ պատճառներով յապահեցաւ, կը հասարակուի յառաջիկայ շաբարանանքեանը, յոթ հետաքրքրաւութ, իրահանգիչ եւ այթնական նիւթերով : Տաճարի վնարող բաժանորդները ըստ սպառութեան ձերիաբար կը սահնան զայն յաջորդ թիւին նետ :

### ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

### ՀԱՄԱՉԳԱՅԻՆ ՏՕՆ

Դրի Գիւտին 1500 ամսակին եւ Հայ Տոպագրութեան 400տմ.ակին առթիւ Ազգ. Վարչական, և թաղերու մէջ՝ երթասաւրդական շրջանակներու մէջ, վերջին 15 օրերու բնթացքին, մուծ ոգեւորութիւն կոր, և մեծութեած պատրաստութիւններ տեսնուեցան, ապահովելու համար հանգիստագործութիւնները :

Ազգ. Վարչութեան սրոշմամբ կարգուած Յանձնաժողովը, որուն անդամոց թիւը ի վերջոյ 50ի յանգեցաւ՝ ծանօթեկեղեցականներու, գրագէտներու, գրագիտուհներու ևլն., մասնակցութեամբ, յաջորդական գումարումներով կարգադրեց Մայր-Եկեղեցւոյ մէջ կատարելի հանդէսներու յասակագիծը, ինչպէս նաև բնդհամուր ու միօրինակ զարդանշաններու, ժապաւէններու եւ քարդ-քօստագիններու բաշխումը, որ բոլոր թաղերու մէջ միօրինակ պիտի ըլլայ :

Յանձնաժողովին կարգադրութեան համաձայն, այսօր շաբաթ կը կատարուի Մայր-Եկեղեցւոյ մէջ հանդիսաւոր պատարագ՝ բոլոր գարութեան և զրոց աշակերտներու համար, և կէս օրէն յետոյ կը կատարուի հանդէս մը, ուր կը խօսին ի գիմաց Վարչութեան Արրանամ էֆ. Տ. Յակոբեան, Եղիշէ եպօ. Դուրիւան, Վեր. Ա. Շմաւոնեան, Ստեփան էֆ. Կուրափիկեան (Թուրքերէն), եւայլն. Հանդէսը պիտի ունենայ նաև զեղարուեասական բաժին մը : Պատարագի երգեցողութիւնները, ինչպէս նաև հանդէսին երկչափումը կը վարէ Տ. Կոմիտաս Վրդ :

Իսկ թաղերու մէջ վազը պիտի կատարուին բազմաթիւ ճոխ յայտագիրերով հանդէսներ ու երեկոյթներ : Այսպէս, Բերտ, Գամագիւղ, Սամաթիա, Ֆէրիգիւղ, Օրթաքէօ, Գումգարու, Պէշիքթաշ, Գուրուչչէմէ, Բումէլի Հիսար, Պօյաճը գիւղ, Գնալը, Թօփկարու, Սկիւտար ևն. իրարուն կը մրցին իրարմէ աւելի շքեղ ու ա-

ւելի փայտուն հանդէսներ կազմելու համար, ինչ որ ցոյց կուտայ թէ Հայ ազգաւոյն գգացումները բոլորովով ընդարձակացած չեն, և ազգը զնահատել գիտէ իր քաղաքակրթական այս Մեծ Տօնին նշանակութիւնը եւ ըմբռնել անոր կարեւորութիւնը:

Ազգ. Ժողովը երէկ Մայր Եկեղեցւոյ մէջ հանդիսաւոր նիստ գումարելով, բացումը կատարեց Կրթական Նույրահաւառքութեան:

\* \* \* Համագգային Տօնին մասնակցելու փափաք յայտներ են եղեր Միսիթարեանք, և Տքգ. Թորգոմեան Էֆ. զիմնը է պաշտօնանկ Թէրզեան Պատրիարքի՝ արտօնութիւն առանալու. բայց այս վերջինը պատասխաներ է թէ հարկադրուած է իր մեծաւորէն հրաման սասանալ ('): Բնուզնիղոն միւս կողմէ իրաւամբ կը կատածի Միսիթարեանց այդ քաղձանքին անկեղծութեան վրայ, յիշելով Մէսէվիշեան Վրդ. Ի. Հայ գրագէտի մը ըրած խօսքը թէ իրենք չեն կրնար Հայ Եկեղեցի սուք կոփել, մանաւանդ երբ Պատարագ կայ: Այսուհանդերձ արախ ենք յայտարարելու որ Վարչական Խորհուրդը պաշտօնապէս ներկայացնեցիչ զրկած է Մայր Եկեղեցի, այսօրուան հանգէսին: Հայ-Բաղոքական Եղբարք, աւելորդ է ըստել, չերժ սիրով կը մասնակցին Հայ Մտքի Տօնին:

\* \* \* Պոլսոյ Հայ Դրավաճառները, որուած են 5000 օրինակ տպագրել հանդէսներու մէջ խօսուած ճառերը, և հասոյիր յատկացնել Կրթական հիմնական դրամագլուխին: Պալենց Էֆ., Ա. Սահակի եւ Մեսրոպի մհծադիր պատակերներէն 3000 օրինակ տպագրելով դրած է Յանձնախումբին տրամադրութեան տակ:

\* \* \* Պոլսոյ Հայ ոսկերիներն և գոհարավաճառները պատրաստած են  $\frac{1}{2}$  մետր բարձրութեամբ արծաթեայ կոփով մը, ուրուն վրայ ալքամանդներով ընդելուզուած են ոսկերայ Մեսրոպեան տաւերն և Սահակայ և Մեսրոպայ մանրանկարները: Կոթողին պատուանդանին վրայ արձանագրուած է սա վերասառութիւնը: — Զօն երախտազիւրեան Սահակայ և Մեսրոպայ

եւ բոլոր անման բարգմանցաց՝ իր զաւակներին: Պոլսոյ Հայ ոսկերիներ եւ զոհարավանալներ: 413—1613—1913»: Հայ արուեստի այս հիմնալի արտադրութիւնը այսօրուան հանդէսին կը ցուցադրուի Մայր Եկեղեցւոյ մէջ, յետոյ պիտի զրկուի Մայր Աթոռ՝ իրբեւ յաւերժական յիշատակ Մեծ Յորեւեանին:

\* \* \* Ամերիկեան Աստուածաշոնչի Ընկերութիւնը 1000 օրինակ վրաբառ Աստուածատչը է՝ կարոտ Հայ վարժարաններու, ի պատիւ Թարգմանչաց Տօնին:

\* \* \* Այսօր փակ են Ազգ. Պատրիարքարանը, Հայ վարժարանները, և Հայ վաճառատուններ:

### Ա.ԶԳ.Ա.ՑԲՒ. ԺՈՂ.Ա.Յ.

Ազգային Ժողովին վերջին գումարում իր վերին սատիճանի կարուկ որոշումներով օգտակար նիստ մը եղաւ: Դիւանի միջոցաւ ուսումնակիրուած եօթը ինդիրներ օրակարգէն չնշուեցան: Այսպէս ուրշուեցաւ:

Ա. Վերջին Կաթողիկոսական ընտրութեան իրը համարատուութիւնը արձանագրել Օնսիկ Էֆ. Զիգմի Մարաֆի հրաժարականը և այդ հրաժարականը մերժել:

Բ. Գագարեալ երեսիփահաններու՝ մինչեւ նորերու ընտրութիւնը պաշտօնին վրայ մնալը:

Գ. Եկեղեցն Կանոնագրի վերաբննութեան Յանձնաժողովովին հրահանգ տալ, չուտով աւարտելու իր գործը:

Դ. 1906 էն մինչեւ 1910 իրարու յաջորդող կրօն. Ժողովներու համարատութիւնները պահել օրակարգին վրայ:

Ե. Երէցեան Ս. ը անպարտ ճանչնալ իր վրայ ծանրացած ամբասանութիւններէն:

Զ. Պետրոս Գագարամաճեանի խնդրոյն համար Ճանկիւլեանի հարցավանդման մասնին Վարչութեան բացատրութիւնները լուց և բաւական համարեց:

Է. Աղթամար կեղրոնէն պատուիրակ մը զրկել:

Ասկէ զատ Վարչութեան պատշարկալ